ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«05» 06 2012 թ.

№ 4-997

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
պրն Ա. ԱՇՈՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աշոտյան,

Ի պատասխան Ձեր 29.05.12թ. №01/67-1/5234-12 գրության՝ ներկայացնում ենք ՀՀ Նախագահի աշխատակազմի քննարկմանն ուղարկված «Հայաստանի Հանրապետության երրորդ զեկույցը՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի դրույթների կատարման մասին» ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ եզրակացությունը (կցվում է):

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մուտքագրված է համակարգում
Գրանցման № 113/4-12
06 06 2012թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության երրորդ զեկույցը՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն» Ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ ընդհանուր առմամբ սկզբունքային առարկություններ չկան:

Առկա են որոշակի բացթողումներ և անճշտություններ, որոնք նշվել և աշխատանքային կարգով ներկայացվել են նախագծի հեղինակներին:

Միաժամանակ ներկայացված նախագծի մի քանի կետերի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել կոնկրետ առաջարկներ.

59-րդ կետում ավելացնել հետևյալը.

2010-2011թթ. ուսումնական տարիներին այդ հնարավորությունից օգտվել են եզդիական և քրդական համայնքների մեկական ներկայացուցիչ, որոնք սովորում են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, ինչպես նաև մեկ ներկայացուցիչ հրեական համայնքից, որն էլ ուսանում է Երևանի պետական կոնսերվատորիայում:

75-րդ և 172-րդ կետերին ավելացնել հետևյալ պարբերությունը.

2012թ. ապրիլին ՀՀ կառավարությունը պետական բյուջեի պահուստային ֆոնդից արդեն իսկ 10 մլն դրամ լրացուցիչ ֆինանսական հատկացում է կատարել ՀՀ ազգային փոքրամասնություններին՝ ազգային մշակույթի զարգացմանը, լեզվի և ինքնության պահպանմանը, ինչպես նաև իրավական դաշտում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:

Համապատասխան ծրագրերը ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդում 11 համայնքները ներկայացնող կազմակերպությունների կողմից առաջադրվել են քննարկման:

Խորհրդի 03.05.2012թ. նիստը՝ քվեարկության միջոցով հաստատել է քննարկումների արդյունքում ընտրված ծրագրերը, որոնց իրականացման համար նախատեսված գումարները փոխանցվել են համապատասխան կազմակերպություններին:

156-րդ կետում նշված տեղեկությունն այն մասին, որ ՀՀ Նախագահի աշխատակազմում աշխատում է ազգությամբ ասորի աշխատակից չի համապատասխանում իրականությանը:

Միևնույն ժամանակ նույն կետում հարկավոր է նշել Ազգային ժողովում ազգությամբ եզդի աշխատակցի առկայության մասին: